շատ տարիներ, և ցանկանք սոցա ձեռնարկութեանցը հոկայաքայլ յառաջադիմութիւն, որ աւելի զօրութեամբ՝ իրրև կենդանարմատ ծառ՝ աճէ, զօրանայ և հարիւրաւոր չափով պտղաբեր լինի 'ի նպաստ և 'ի պարծանս Հայկազանց և նորա Ս. Եկեղեցւոյն։

Որդեկիր Մարդասիրական Ընկերութեան
Ուսաց Գրիգորեանց։

է 1870 -դ յն-ն 8--էն
Ի ԲԱԳՈՒ։

Լոմբարդ-Ռիեան Արարատ Ամսագրոյ

Հանգուցեալ Հայրապետն ամենայն Հայոց Մատթէոս՝ յետ գալստեան իւրոյ 'ի Տփխիս 'ի 1869 ամի, և յետ ծանօթանալոյ ընդ իս՝ յաւուր միում 'ի մէջ բազմախումբ հանդիսականաց հոգևորականաց և աշխարհականաց յանձն արար ինձ զերկուս ձեռագիր տետրակս ասելով. "Այս տետրակները առ, լաւ կարդա և սրբագրէ՝ առանց երեսպաշտութեան, և շուտով զրկէ Էջմիածին, որ տպել տամ". յիրաւի վեհանձնական էր հրաման Հայրապետին, այլ վախճանն ոչ համաձայն նմին։

Ես զայնոսիկ տետրակս զնեալ գտի անդէպ հրատարակութեան ըստ պարունակեալ 'ի նոսա նիւթոցն անտեղութեան և ըստ պիտոյից ժամանակին, վասնորոյ և զանց արարի զսրբագրութեամբ նոցին. սակայն կրկին հրամանք Հայրապետին առ յայնժամեան Առաջնորդ Թեմիս Արքեպիսկոպոսն Սարգիս՝ ստիպեցին զիս գրել զեմ կարծիս վասն յիշեալ տետրակաց. և որպէս ինձ թուի՝ այն նամակ անհաճոյ իմն թուեցաւ յաչս հանգուցեալ Հայրապետին, ըստ որում այն տետրակք հրատարակեցան առանց իրիք փոփոխութեան։

Զօրինակ նամակի իմոյ առ Ընդհանրական Հայրապետն 'ի 26-ն Սեպտեմ. 1869 ամի, իբրու մատենագրական յօդուած ընդ սմին առաքելով 'ի Խմբագրութիւնդ, խնդրեմ՝ եթէ արժան դատեսցի, հրատարակել յէջս պատուական Ամսագրիդ։

Յ. Կոլենեանց։

յ30-ն Մայիս 1870 -դ.
Ի ՏՓԽԻՍ։

ԴԱՇԱՆՑ ԹՈՒՂԹ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ

Ընդանեցի զպարտեացս իմոց հատուցանել զսակ՝ 'ի կատարումն Վեհանձնական հրամանի Ձերոյ վերաշնութեամբ երկոցունց տետրակաց յօրինելոց 'ի Ձէնջ. սակայն աղաչեմ ներողամիտ լինել, հաւատացեալ անեղկբայ, թէ կարի զօրաւորք էին խափանարարք՝ վաղ ընդ փոյթ կատարելոյ զՁեր հրաման և զիմ քաղցր պարտաւորութիւն։

Եւ ահա վստահացեալ 'ի պատուէր Ձեր, որ զօրէն նախատպին Ձերոյ հրամայեցիք ինձ ,,Լիցի բան Ձեր, այո՝ այո, և ոչն՝ ոչ,, գրեմ 'ի կարճոյ, զոր ինչ միտք իմ և խորհուրդք թելադրեն, ոչ իբրև անյեղլի ճշմարտութիւն, այլ իբրև կարծիք։

Նախ՝ երկդարեան իմն սովորութիւն մնեալ է յազգ մեր զհրաժարեալ կամ ըզհրաժարեցուցեալ պատրիարգունս կոչել ,,նախկին Պատրիարգ,,՝ որպէս 'ի ճակատս երկուց յանձն եղեալ իմում վերաշնութեան տետրակաց նշանակեալ է. այսօրինակ տիտղոս արտաքոյ իմն է յատկութեան լեզուի մերոյ և 'ի նորոց ոմանց ներմուծեալ. զի բառդ Նախկին՝ նշանակէ առաջին, հին, սկզբնական. ուրեմն նախկին Պատրիարգ Կոստանդնուպօլսոյ ոչ հրաժարեալքն են, այլ էր Յովակիմ Արք Եպիսկոպոսն, որ 'ի Սուլթան Մեհեմմէտ կարգեցաւ առաջին Պատրիարգ Հայոց Պոլսոյ 'ի 1461 ամի Տեառն։ Ըստ բուն կանոնաց լեզուիս պարտ է գրել՝ Էրբէն Պատրիարգ, որպէս յաւետարանի Յովհաննու 9—13 " Ածին

առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր,,. այսպէս արկեալ է 'ի կիր և 'ի բազում տեղիս։

Երկրորդ՝ խօսելով 'ի վերայ տետրակին վասն հաստատութեան դաշանց Թղթոյն, որ զառաջինն տպագրեցաւ 'ի Պօլիս 'ի վերջ պատմութեան Ագաթանգեղեայ 'ի 1709 ամի, յայտնեմ զիմ կարծիս այսպէս։

Այն Թուղթ դաշանց որչափ և ունի զիւր ջատագովս, 'ի Թիւս որոց համարի և Միքայէլ վարդապետն Չամչեան, այնչափ ունի և զփաստս դիմամարտս։ Այո, բազումք 'ի մատենագրաց Հայոց նաև յօտարաց յիշեն զդաշանց ոմանց եղելոց 'ի մէջ Կայսերն Կոստանդիանոսի և մերոյն Տրդատայ, այլ այն վկայութիւնք նոցա երբէք չ'վերաբերին առ եկեղեցական դաշինս սովորաբար 'ի մէջ Թագաւորաց լինին դաշինք քաղաքականք, յորոց մի պա տի լինել և յիշատակեալ 'ի նոցանէ դ չին։

Գիտէ աշխարհ ամենայն. զի ցսկիզբն երրորդի դարուն և անդր ես 'ի Հայրապետս Հռովմայ չէր մտեալ ոգին իշխանասիրութեան. Հայրապետք չորից Աթոռոց համարէին հաւասարապատիւք. ամենեքին արհամարհէին զաշխարհական պերճութիւնս. և ըստ Քրիստոսի ասէին "Իմ իշխանութիւն չէ յայսմ աշխարհի". ունէին 'ի մտի և զպատուէր Փրկչին, "Թագաւորք ազգաց տիրեն նոցա և մեծամեծք իշխեն, ոչ նոյնպէս իցէ և 'ի Ձերում միջի, այլ որ մեծն է 'ի ձեզ, եղիցի ամենեցուն ծառայ". այլ 'ի Թղթին դաշանց երևին բանք կարի անմիաբանք քրիստոնէական ոգւոյ աւետարանին, որպէս յայտ է ամենեցուն, որք ուշի ուշով ընթերցեալ են զայն։ Ի Թղթին դաշանց 'ի բերանոյ սրբոյն Սեղբեստրոսի գրի, "Այսպէս և ստորագրեցաւ հրովարտակս, հրամանաւ իմով մեծի Պապիս հռովմայեցւոց Եւսեբիոսի, որ և Սեղբեստրոս, Աթոռակալի գլխաւորաց Առաքելոցս Պետրոսի և Պօղոսի, որ երկնաւոր և երկրաւոր բանալեօք ունիմ իշխանութիւն յարևելից մինչև յարևմուտս 'ի վերայ ամենայն ազգաց Քրիստոսադաւանից. կապօղ և արձակօղ 'ի յերկինս և 'ի յերկրի. և հրամանահան հզօր յընդհանուր եկեղեցիս Քրիստոսի": Արդ ամենայն ուղղամիտ դատեսցի, թէ այս բանք համաձա՞յն են մտաց սրբոյն Սեղբեստրոսի Աթոռակալին Պետրոսի, որ անուանէր զինքն ծառայ Յիսուսի Քրիստոսի և երիցակից երիցանց. և ընդէ՞ր է ինձ զամենայն ճոռոմաբանութիւնս բարդեալս 'ի Թղթին դաշանց մի առ մի բերել յառաջ, ընթերցցի զայն իւրաքանչիւր ոք, և համեմատեսցէ ընդ ոգւոյ աւետարանին և նոյն իսկ Հայրապետին Սեղբեստրոսի, և իսկոյն ակներև տեսանի ճշմարտութիւնն։

Եթէ դարձուցանեմք զաչս մտաց մերոց 'ի պատմութիւնս Հռովմէական եկեղեցւոյ, յութերորդ դարէ ցչորեքտասաներորդն գտանեմք զբազում խարդախս Թղթոց տարածեալս 'ի փառասէր Պապից և յարբանեկաց նոցա յանուն նախնի սուրբ Հայրապետաց առ 'ի հաստատել զփաստ տիեզերական իշխանութեան իւրեանց. 'ի կարգէ սոցա համարի և Թուղթն դաշանց. վասնորոյ լաւ ես լինի ջանալ 'ի ձեռս բերել զօրինակ պատմութեան Ագաթանգեղեայ գրեալ նախ քան զմուտ Սունիկթօւանից յաշխարհս մեր, և այս չէ դժուա-

ին, եթէ հետամուտ լինուք, թերևս գըտնի այն և յողորմելի գրատան սրբոյ Էջմիածնի*)։

Ի ծանօթագոյն մեղ օրինակաց հնագոյն համարի Փարիզեան ձեռագիրն Պատմութեան Ադաթանգեղեայ կը յայտնեմք, զի Մայր Աթոռոյս Մատենադարանի մէջ գտնուած ձեռագիր օրինակաց երեք ընտիր օրինակները չունին երբէք Դ-ՇՆ Բ-Ղ։

Ի սոցանէ առաջինը՝ 1656 ընդհանուր թուականաբաւ, որ մեծագիր՝ բոլորգիր՝ հին, այլ ընտիր գրչութեամբ գրուած է Ակներ Վանուց մէջ. զոր իւր հնութեամբ և այլ մի քանի պարագաներէ առանց տարակուսելոյ կը համարիմք՝ զի երկոտասաներրորդ դարու վերջերը գրուած է։

Երկրորդը՝ որ է 1658 ընդհանուր թուականաբաւ, նոյնպէս թէպէտ թուական չունի և ո՛ւր գրուած լինելն ևս չէ յայտ, այլ ԺԻ. երրորդ և ԺԳ. երրորդ դարուց միջոցները գրուած կը համարուին. (սորա մէջ 'ի վերջին դարս՝ նոտրագիր գրչութեամբ ջանացած են դաշանց թուղթը յաւելուլ, բայց կիսատ մնացած է, և խարդախութիւնը ակնյայտնի կ'երևի ամեն տեսանողաց)։ Նոյնպէս երրորդ օրինակը որ նոտրագիր է, ԺԶ. երրորդ դարու գրուածքներէն է։

Իսկ միւս օրինակաց մէջ առաջինը՝ որ մեծագիր՝ բոլորգիր՝ և Ազգ 2ԽԲ. (Փրկ. 1293) թուականին գրուած է 'ի Յովհաննավանան որ 'ի Կարբի (Լաբագածոտն գաւառի մերձ Լաշտարակ), ունի դաշանց թուղթ։ Նոյն միջոցները տակաւին նոր կը տարածուէին ազգաւեր Ուենիթոսք՝ նախ Ատրպատական և անտի Արարատեան աշխարհը տարածուելով՝ իւրանց թոյնը և խմորը պապական մի լատին Եպիսկոպոսէն ընդունած։

Երբ յաջողութեամբ Տեառն լոյս չընտեսած Ազգ. պատմական մատենագրութիւնքը 'ի լոյս կընծայեմք, հետզհետէ ցարդ հրատարակուածները ևս ընտրելագոյն հին և բազում օրինակաց բաղդատութեամբ կրկին պետք է հրատարակեմք։

Զբմոռանամք յիշել զայս ևս, որ մեր հնագոյն օրինակի դաշանց թղթոյն և հրատարակուածներուն մէջ բաւական զգալի և աչքի զարնող տարբերութիւնք կան։ Ն. ԽՄԲ.

մութեան Ադաթանգեղեայ գրեալ 'ի ՃԳ. թուականի Հայոց. յորում չէ՛ք այն թուղթ դաշանց, չէ՛ք և 'ի Յունական բնագրին, ապա ուրեմն չէ՛ ինչ գիւրին. նա թէ խիթալն իսկ է ասել, թէ որ ինչ չգըտանի 'ի հնագոյն օրինակ, 'ի Յունական բնագրին, և 'ի գիւանին Վատիկանու լցել վաւերական, ըստ որում գտանի այն 'ի նորոգ օրինակս ինչ, յորոց ածանցեալ է և 'ի տպագրեալս 'ի Պօլիս։

(Մնացորդն 'ի յաջորդ ամսագրիս։)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԻՒՆՔ

ՏՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԻՆՉԵՒ

Յուլիս 27։ — Մ'կրտիչ Վահանայն Պարպեանց՝ Հին-Նախիջևանայ Հ. Կառավարութեան անդամակցութեան պաշտօնէն արձակեցաւ։

,, ,, — Ըստ հրամանի Վ. Հ. Հայրապետի ամենայն Հայոց՝ Երջ. Թադէոս Վարդապետ Տէր Պանիէլեան նշանակեցաւ Փոխանորդ 'ի Հ. Նախիջևան՝ 'ի տեղի Պետրոսեանց Վարդապետի Մխիթարեան։ Իսկ վերջինս առաքեցաւ 'ի Վանան Որոտնայ՝ ապաշխարել անդ մինչ ցայլ առանձին տնօրէնութիւն Հոգ. Օ. Իշխանութեան։

,, 29։ — Ըստ հրամանի Վ. Հ. Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ Վանահայր Եջմառիսու Երջ. Մ'կրտիչ վարդապետ Տէր Թադէոսեան քննիչ կարգեցաւ 'ի վերայ գործոց Յակովբ վարդապետի Մնացականեան և Երիստակէս վարդապետի Սեդրակեանց։

(*) Անշուշտ մեր ընթերցողք կը գիտեն, զի Պ. Կարենեանցի այս խօսքը Աթոռոյս Մատենադարանի այժմեան բարեկարգ և պայծառ գրութեան չակնարկեր, այլ 8 9 տարուց չափ յառաջ անխնամ և բարձի թողի վիճակին, զոր բազմօք կը պատմեն պակասեալք։

Իսկ վասն հնագոյն օրինակաց Պատմութեան Ադաթանգեղեայ կը յայտնեմք, զի Մայր Աթոռոյս Մատենադարանի մէջ գտնուած ձեռագիր օրինակաց երեք ընտիր օրինակները չունին երբէք Դ-ՇՆ Բ-Ղ։

Ի սոցանէ առաջինը՝ 1656 ընդհանուր թուականաբաւ, որ մեծագիր՝ բոլորգիր՝ հին, այլ ընտիր գրչութեամբ գրուած է Ակներ Վանուց մէջ. զոր իւր հնութեամբ և այլ մի քանի պարագաներէ առանց տարակուսելոյ կը համարիմք՝ զի երկոտասաներրորդ դարու վերջերը գրուած է։

Երկրորդը՝ որ է 1658 ընդհանուր թուականաբաւ, նոյնպէս թէպէտ թուական չունի և ո՛ւր գրուած լինելն ևս չէ յայտ, այլ ԺԻ. երրորդ և ԺԳ. երրորդ դարուց միջոցները գրուած կը համարուին. (սորա մէջ 'ի վերջին դարս՝ նոտրագիր գրչութեամբ ջանացած են դաշանց թուղթը յաւելուլ, բայց կիսատ մնացած է, և խարդախութիւնը ակնյայտնի կ'երևի ամեն տեսանողաց)։ Նոյնպէս երրորդ օրինակը որ նոտրագիր է, ԺԶ. երրորդ դարու գրուածքներէն է։

Իսկ միւս օրինակաց մէջ առաջինը՝ որ մեծագիր՝ բոլորգիր՝ և Ազգ 2ԽԲ. (Փրկ. 1293) թուականին գրուած է 'ի Յովհաննավանան որ 'ի Կարբի (Լաբագածոտն գաւառի մերձ Լաշտարակ), ունի դաշանց թուղթ։ Նոյն միջոցները տակաւին նոր կը տարածուէին ազգաւեր Ուենիթոսք՝ նախ Ատրպատական և անտի Արարատեան աշխարհը տարածուելով՝ իւրանց թոյնը և խմորը պապական մի լատին Եպիսկոպոսէն ընդունած։

Երբ յաջողութեամբ Տեառն լոյս չընտեսած Ազգ. պատմական մատենագրութիւնքը 'ի լոյս կընծայեմք, հետզհետէ ցարդ հրատարակուածները ևս ընտրելագոյն հին և բազում օրինակաց բաղդատութեամբ կրկին պետք է հրատարակեմք։

Զբմոռանամք յիշել զայս ևս, որ մեր հնագոյն օրինակի դաշանց թղթոյն և հրատարակուածներուն մէջ բաւական զգալի և աչքի զարնող տարբերութիւնք կան։ Ն. ԽՄԲ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.